կթղ. հետևեալ ինքնագիր յիշատակարանն ունի իր կթղ. ընտրութեան և Ս. Յակոբի ուխտագնացութեան առթիւ. «Նուաստ Կիրակոս կաթողիկոս նստայ յաթոռ հայրապետութեան որ եմ եղբօրորդի Թորոս Սրբազան կաթողիկոսին ՌՄԽԶ (= 1797) փետր. ԺԴ. յաւուր տեառնընդառաջի.»

«Ի ՌՄԾԲ (= 1803) չոքայ ի սբ. երուսաղէմ Դ. եպիսկոպոսօք և Դ. վարդապետօք և Դ. քահանայիւք և Ե. սպասաւորօք եւ անտի եկի ի Բերիա», (Տեսնել նաեւ ժպե. Հատ. Բ. էջ 434)։ Կիրակոս կթղ. երբ Սսոյ եկեղեցիին նորոգութեամբ կ'զբաղէր՝ Հալէպի կուսակալը ամբաստանեց զայն իբր ապստամբապետ, որպէս թէ միացած է Զէյթինցւոց. 1819 ին այդ ամբաստանութեամբ Պոլիս կը կանչուի եւ սակայն կ'արդարանայ յայտնապէս։ 1820 Սեպտ. 19 ին Պոլսէն Սիս կը մեկնի եւ ազատօրէն Սսի մէջ կը պաշտօնավարէ մինչեւ 1822, բայց երկրին բռնապետներու ձեռքով բռնի թունաւորուելով կը վախճանի (Դիւան. Գիրք Ժ., էջ 473—475)։ Ուրիշ յիշատակարան մը սակայն՝ այս վերջին պարագան հետեւեալ կերպով կը պատմէ. «թէպէտ Կիրակոս անգամ մը ազատեցաւ ի մահուանէ օգնականութեամբ ազգին և պատրիարքի տեառն Պօղոսի Ադրիանուպօլսեցւոյ, բայց ի վերջոյ դեղով թիւնոյ Խոզանեան Ալի պէկի սպանաւ յԵնի գիւղ, Հայոց ՌՄՀԲ ի շաբաթ օր Խաչվերացի ի նաւակատիսն, (որ է 1823 սեպտ. 15.) (Ազգպտմ., էջ 3613—14)։

ԿԻՐԱԿՈՍ ՊԵ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ.— Հայրը՝ Մնացական Զուղայեցի. Ծ. 1783 ին. 1807 ին Զռ. Էտիրնէի Առ. Միքայէլ եպս.էն, իր եղբօր Գէորգ վրդ.ի (✻ 1811, Զմիւռնիա) յորդորումովը։ Թէոդորոս պտրք.ի օրով կ'ընդունուի Ս. Յակոբի վանքին միաբաններու շարքին մէջ և կ'ընտրուի Քարտուղար և Հանդերձապետ. 1812 ին իր եղբօրը՝ Գէորգ վրդ.ին ի յիշատակ Ս. Յակոբի կը նուիրէ զոյգ մը սաղաւարտ թաւշապատ և մարգարտայեռ (Ցուց. Պ.)։ Եպս կը ձեռնադրուի 1815ին. Նը. Զմիւռնիոյ, Պանտերմայի և Կիլիկիոյ (1822-23). Խորհրդական անդամ վանքին. (1823). առ. Եգիպտոսի (1825—1834). Պօղոս պտրքի հրամանով 1836ին կ'ուղևորի Կ. Պոլիս վանական հաշիւներու համարատուութեան համար։ Կը կարգուի ներքին տեսուչ Սկիւտարի Երուսաղէմի ճեմարանին (1836—1839). Պե.